ընդհանուր հռչակ վայելող ուսումնարաններ, որոնք չեն յիշատակուած. բացի այդ՝ ընդհանուր կրթական հաստատութիւնները նոյնպէս զուրկ չեն նաեւ գեղարուեստական առարկաների դասատուութիւնից:

Այս ամենը պարզ ապացոյց է, որ Ամերիկացու հռչակ վայելող գործնական կեանքը բոլորովին արգելք չէ, որ այդ կեանքը զարդարուած լինի նաեւ գեղարուեստի այսինքն մարդու սրտին, հոգուն խօսող արուեստի արդիւնքներով: Եւ այդ կողմից Միացեալ-Նահանգները Եւրոպայից սովորելու շատ բան ունին ի հարկէ. քանի որ Եւրոպան ունի հարուստ անցեալ, մինչդեռ ներկայ գեղարուեստական կրթութեան վերաբերմամբ՝ նախանձելու տեղիք չունին:

Վանական.

ՆԱՐԴ.*

ԶՐՈՑՑ ՆԱԴԱՐԴ.

Խորին գիշեր լինելով, ես մի մոմ վառեցի և ձեռով պաշտպանելով լոյսը՝ մտայ հին պարտէզը:

Չինգ տարի և մինչև անգամ աւելի էր, որ ոչ ոք չէր մտել այդտեղ, բացի գուցէ որ և է գողից, պտուղների հասած ժամանակը: Ճեմելիքները անյայտացել են անպէտք բոյսերի տակ. խաղողի որթերը կորել են բարձրացած եղինջների մէջ, փշերը խեղդում են հաղարջենիներին և ծառից վայր ընկած չոր ճիւղերը ճայթճայթում են իմ ոտների տակ... Այս առաջ եմ գնում. խոնաւ գիշեր է, լռութիւն, ամայութիւն, միայնութիւն — և ես անտառի ազդած խորհրդաւոր ահ ու դողով եմ համակուած:

Այս հասայ մառանը: Յամառ բանալին ճռռում է ժանգոտած փականքի մէջ. ես դժուարութեամբ քաշում եմ ծանր դուռը, որ կարծես օդահան մեքենայով է փակած,— և ներս եմ մտնում...

Յանկարծակի երևեցած լոյսից, որ ցոլացրեց դռան, մի ընդհանուր իրարանցում յառաջ եկաւ. լոյսը փարատեց ժողովարանի խաւարը, և մի ամբողջ դարշելի ցեղ, սարսափելի սարդերի մի ամբողջ համր խումբ՝ դողում, շարժուում և խելագարի նման փախչում են, կարծես մի տատանուող սև արև լինին, և շտապով նետուում են դէպի անկիւնները:

Բոլորը թաղնուեցան, բոլորն անյայտացան:—Միայն մէկը այդ հրէշներից, ամենամեծը՝ թաւամազ, սարսափելի, արհամարհել էր փախուստը: Նա մնացել էր իւր տեղումն անշարժ, սեւին տալով սպիտակ պատի վրայ, իւր ութը յաղթանդամ թաթերի վրայ կանգնած:

Անկասկած նա նայում և սպասում է ինձ,— կարծես կռուի է կանչում...

Մոքիցս աւելի շուտ ձեռը պատասխանեց: Մոմը, ինչպէս մի հորիզոնական ուղղութեամբ բռնած նիզակ՝ բոլորքից յամառին. նա ճթթում, ոլորուում և— վայր է ընկնում...

Եւ մինչ ոսկրներիս մէջ ուղեղը սառած նայում եմ սարդի մահուան դէմ մղած վերջին կռուին, ես լսում—այո, ես լսում եմ հաստատ, իմ ականջով,—իմ սպանածի ոգու ձայնը, որ ինձ ասում է.

«Այս քեզանից ոչինչ չեմ ուզում քեզ համար ոչինչ չարժեմ ես ծառայում եմ քեզ ձրիաբար, ինչպէս քո բոլոր հաւատարիմ դաշնակիցները, և դու ատում ես ինձ, անհանգիստ մարդ:

«Այս ինձ համար գործ էի շինել ազատել քեզ ճանճերից և մժեղներից, որ կուտէին քեզ, եթէ ես չլինեի. ես տալիս եմ քեզ այնքան, որքան կարող եմ, քո ամառուան գիշերների հանգստութիւնը,—և փոքր ինչ առաջ ես կանգնեցրի վագող մորմին, որ գնում էր քո ամենասիրելի երեխային անողոքելի մահով սպանելու...

«Բայց դու ինձ ոգեղ ես համարում և իրաւունք ունես, որովհետև ինքդ այդքան գեղեցիկ ես, իմ ծառայութեանց փոխարէն դու աներկիւղ սպանում ես ինձ, և իրաւունք ունես, որովհետև դու ինձանից ուժեղ ես:

«Սպանիչ, ցած, ապերախտ,—անմի՛տ»:

Թարգմ. Զ. Ց:



ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՄՈՒԼ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ:

Մամուլի արած յառաջադիմութիւնն այսօր լուսաւորուած երկրներում այնքան մեծ է, որ հասարակական ամէն մի հաստատութիւն և ամէն մի գործիչ պէտք է հաշիւ տայ նրան և աչքի առաջ ունենայ. Ինչպէս որ ամէն մի զէնք առհասարակ, այսպէս և մամուլը հնարուած է մարդկանց անձն և իրաւունքը պաշտպանելու համար, սակայն ճիշդ այնպէս, ինչպէս դաշոյնը մարդասպանի և աւազակի ձեռքին պաշտպանողական զէնք չէ, այլ անիրաւութեան և յանցագործութեան օժանդակիչ միջոց, այդպէս էլ այսօր մամուլն ունի իւր ի չարը գործ դնողների դասակարգը,

Ինչպէս որ զէնքի ի չարն գործ դնողները դասակարգերի են բաժանուում, այդպէս էլ մամուլի